ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.03.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/69

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Սարգսյանի (լիազորագիր տրված՝ 22.03.2021թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.03.2021թ. թիվ 26/26-1/3658-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 05.03.2021թ. թիվ 0166 գրության հիման վրա 15.03.2021թ. թիվ 26/26-1/3658-2021 գրությամբ նախաձեռնել է «Մեգիէլ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մեգիէլ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/69 ընթացակարգի շրջանակներում 23.02.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել, որ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում առկա է Ընկերության կողմից ներկայացված բողոք, որի քննության արդյունքներն անմիջականորեն կապված են Ընկերության կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացվելիք դիրքորոշման և առարկությունների հետ:

3. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.03.2021թ. թիվ 0166 գրությամբ հայտնել է, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ձևով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ 7-րդ չափաբաժնի մասով: Սակայն նշված մասնակցի հայտը մերժվել է տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանված դրույթը, այն է՝ տվյալ մասնակցի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը, ներկայացվում է «Մեգիէլ» ՍՊԸ-ի տվյալները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/69 ընթացակարգի շրջանակներում 23.02.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/69 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/69 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերով նախատեսված պահանջներին: Հստակեցման կարիք ունի «Մեգիէլ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ուստի «Մեգիէլ» ՍՊԸ-ն չի կարող մասնակցել բանակցություններին:

4. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 05.03.2021թ. թիվ 0166 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.03.2021թ. թիվ 26/26-1/3658-2021 գրությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 05.03.2021թ. թիվ 0166 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու

դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: <u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>,*** ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերով նախատեսված պահանջներին: Հստակեցման կարիք ունի «Մեգիէլ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ փաստաթղթերի գնահատման արդյունքում «Մեգիէլ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ուստի «Մեգիէլ» ՍՊԸ-ն չի կարող մասնակցել բանակցություններին:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 05.03.2021թ. թիվ 0166 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմին:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ուստի «Մեգիէլ» ՍՊԸ-ն չի կարող մասնակցել բանակցություններին, ***այնուհետև, առանց Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու, 05.03.2021թ. թիվ 0166 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան փաստաթղթերով, ներկայացրել է լիազորված մարմին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:***

Մինչդեռ՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, քանի որ Ընկերության հայտի մերժման բացակայության պայմաններում հնարավոր չէ փաստել Ընթացակարգին վերջինիս հետագա մասնակցության դադարեցումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.03.2021թ. թիվ 26/26-1/3658-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**